ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2019/215

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ.Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Մասնակից՝ «Անդրանիկ Քեշիշյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝

Մասնակից՝ Ա. Քեշիշյանի, Գ. Քեշիշյանի, Ա. Միկիչյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-4/28» ծածկագրով հրապատ մեկ անձ, բեռնատար ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 20.11.2019թ.-ի թիվ 26/26-1/19069-2019 գրությամբ «Անդրանիկ Քեշիշյան» Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 13.11.2019թ.-ի թիվ ՊՆ/02/2456-2019 գրության հիման վրա, 20.11.2019թ.-ին «Անդրանիկ Քեշիշյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 20.11.2019թ.-ին և նույն օրը կայացված որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 26.11.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 26.11.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 12.12.2019թ.-ին:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 13.11.2019թ.-ի թիվ ՊՆ/02/2456-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-4/28» ծածկագրով հրատապ մեկ անձ ընթացակարգի 10-րդ և 85-րդ չափաբաժինների մասով Անդրանիկ Քեշիշյան Ա/Ձ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով վերոնշյալ մասնակցին armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ: Սահմանված ժամկետում Անդրանիկ Քեշիշյան Ա/Ձ-ն ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը, սակայն որոնցում առկա էր անհամապատասխանություն, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ

հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը 1 աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում Անդրանիկ Քեշիշյան Ա/Ձ-ն չի ներկայացրել պահանջվող փաստաթղթերի շտկված տարբերակը, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը 06.11.2019թ. մերժել է մասնակցի հայտը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Անդրանիկ Քեշիշյան» Ա/Ձ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Անդրանիկ Քեշիշյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 13.11.2019թ.-ին գրությամբ դիմել է «Անդրանիկ Քեշիշյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.11.2019թ.-ի թիվ 26/26-1/19069-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում:

Մասնակցելով ՍՑ-ԼՕ-2019/215 ծածկագրով ընթացակարգի քննության նպատակով նշանակված նիստին, Մասնակցի ներկայացուցիչները հայտնել են, որ ծանուցում է ուղարկվել Պատվիրատուի կողմից և առաջարկվել է 85-րդ չափաբաժնի մասով շտկել արձանագրված անհամապատասխանությունը, քանի որ «Անդրանիկ Քեշիշյան» Ա/Ձ-ի կողմից տեխնիկական բնութագրով առաջարկվել է 4 աստիճան փոխանցման տուփ, իսկ հրավերով նախատեսված է 5 աստիճան փոխանցման տուփ: Սակայն, այն չի համապատասխանում իրականությանը, քանի որ Ընթացակարգի հրավերի 85-րդ չափաբաժնի մասով փոխանցման տուփերի քանակ նշված չի եղել:

4. <u>ՍՑ-LO-2019/215 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից բեռնատար ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարավել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-4/28» ծածկագրով հրապատ մեկ անձից ձեռքբերման միջոցով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով 85-րդ չափաբաժնի համար պահանջվել է՝ փոխանցման տուփ հավաքական, 3962-1700010-10, գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Անդրանիկ Քեշիշյան» Ա/Ձ-ն:

Մասնակիցը թիվ 1.1 հայտարարությամբ՝ մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով թիվ 85-րդ չափաբաժնի համար առաջարկել է՝ փոխանցման տուփ հավաքական, 3962 (452)-1700010-10, գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 22.10.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը՝ այդ թվում տեխնիկական բնութագրերը, գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-4/28» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի հրավերի պայմաններին (պահանջներին) համապատասխանող, բացի «Անդրանիկ Քեշիշյան» Ա/Ձ-ի: Մանակցի կողմից ներկայացված փաստաթղթերում 85-րդ չափաբաժնի համար ներկայացված տեխնիկական բնութագրերով նախատեսված է 4 աստիճան փոխանցման տուփ, այն ինչ հրավերով նախատեսված է 5 աստիճան փոխանցման տուփ, ինչպես նաև 85-րդ չափաբաժնում հրավերով նախատեսված է գործարանային փաթեթավորմամբ, սակայն մասնակցի կողմից առաջարկած տեխնիկական բնութագրում նշված է առանց փաթեթավորման:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին ուղարկվել է ծանուցում հետևյալ բովանդակությամբ՝ *«Գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-4/28» ծածկագրով ընթացակարգին Ձեր կողմից հայտով ներկայացված որակավորումը հիմանավորող փաստաթղթերը և պարզվել է, որ դրանցում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝*

Ձեր կողմից ներկայացրած փաստաթղթերում 85-րդ չափաբաժնի համար ներկայացված տեխնիկական բնութագրերով նախատեսված է 4 աստիճան փոխանցման տուփ, այն ինչ հրավերով նախատեսված է 5 աստիճան փոխանցման տուփ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը 1 աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը, իսկ շտկված տարբերակը ելեկտրոնային եղանակով ուղարկել v.sahakyan@mil.am էլեկտրոնային հասցեին:»:

06.11.2019թ.-ին՝ սահմանված ժամկետում, «Անդրանիկ Քեշիշյան» Ա/Ձ-ի կողմից չի ներկայացվել շտկված տարբերակը, ուստի գնահատող հանձնաժողովը մասնակցի հայտը 85-րդ չափաբաժնի մասով գնահատել է անբավարար և մերժել է:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից armeps.am համակարգի միջոցով Մասնակցին արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցում ուղարկված լինելու հանգամանքի վերաբերյալ որևէ փաստաթուղթ չի ներկայացվել և չի կցվել armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցումներ բաժնի արտատպված (screenshot) տարբերակը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.11.2019թ.-ի թիվ 26/26-1/19069-2019 գրությամբ «Անդրանիկ Քեշիշյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ... ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝

հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման

դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը…:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է ապրանքների գնման դեպքում ներկայացնի՝ իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ:

Հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ Կարգով նախատեսված դեպքերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Հայտը գնահատվում է բավարար, եթե ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

Այն դեպքում, երբ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, իսկ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բեռնատար ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-4/28» ծածկագրով հրապատ մեկ անձից ձեռքբերման միջոցով գնման ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով 85-րդ չափաբաժնի համար պահանջվել է՝ փոխանցման տուփ հավաքական, 3962-1700010-10, գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Անդրանիկ Քեշիշյան» Ա/Ձ-ն հայտարարությամբ՝ մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով թիվ 85-րդ չափաբաժնի համար առաջարկել է՝ փոխանցման տուփ հավաքական, 3962 (452)-1700010-10, գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային:

Հանձնաժողովի 22.10.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը՝ այդ թվամ տեխնիկական բնութագրերը, գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-

ՀՄԱԱՊՁԲ-4/28» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի հրավերի պայմաններին (պահանջներին) համապատասխանող, բացի «Անդրանիկ Քեշիշյան» Ա/Ձ-ի: Մանակցի կողմից ներկայացված փաստաթղթերում 85-րդ չափաբաժնի համար ներկայացված տեխնիկական բնութագրերով նախատեսված է 4 աստիճան փոխանցման տուփ, այն ինչ հրավերով նախատեսված է 5 աստիճան փոխանցման տուփ, ինչպես նաև 85-րդ չափաբաժնում հրավերով նախատեսված է գործարանային փաթեթավորմամբ, սակայն մասնակցի կողմից առաջարկած տեխնիկական բնութագրում նշված է առանց փաթեթավորման:

06.11.2019թ.-ին՝ սահմանված ժամկետում, «Անդրանիկ Քեշիշյան» Ա/Ձ-ի կողմից չի ներկայացվել շտկված տարբերակը, ուստի գնահատող հանձնաժողովը մասնակցի հայտը 85-րդ չափաբաժնի մասով գնահատել է անբավարար և մերժել է:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից armeps.am համակարգի միջոցով Մասնակցին արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցում ուղարկված լինելու հանգամանքի վերաբերյալ որևէ փաստաթուղթ չի ներկայացվել և չի կցվել armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցումներ բաժնի արտատպված (screenshot) տարբերակը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ գնման ընթացակարգի հրավերով 85-րդ չափաբաժնի համար պահանջվել է՝ փոխանցման տուփ հավաքական, 3962-1700010-10, գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային: Մասնակիցը նշված չափաբաժնի համար առաջարկել է փոխանցման տուփ հավաքական, 3962 (452)-1700010-10, գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային: Սակայն Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ 85-րդ չափաբաժնի համար ներկայացված տեխնիկական բնութագրերով նախատեսված է 4 աստիճան փոխանցման տուփ, այն ինչ հրավերով նախատեսված է 5 աստիճան փոխանցման տուփ, ինչպես նաև 85-րդ չափաբաժնում հրավերով նախատեսված է գործարանային փաթեթավորմամբ, սակայն մասնակցի կողմից առաջարկած տեխնիկական բնութագրում նշված է առանց փաթեթավորման:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ գնման ընթացակարգի հրավերով 85-րդ չափաբաժնով չի սահմանվել, որ փոխանցման տուփը պետք է լինի 5 աստիճան, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից նշված այն փաստը, որ Մասնակիցը տեխնիկական բնութագրում նշել է, որ ապրանքը առանց փաթեթավորման է, չի համապատասխանում

իրականությանը, քանի որ «Անդրանիկ Քեշիշյան» Ա/Ձ-ի կողմից թիվ 1.1 հավելվածով նշել է, որ ապրանքը գործարանային փաթեթավորմամբ է, իսկ մակնիշավորումը գործարանային:

Բացի այդ, Հանձնաժողովի քարտուղարի կողմից armeps.am համակարգի միջոցով Մասնակցին արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցումն ուղարկված լինելու փաստն ապացուցող փաստաթուղթ չի ներկայացվել, այլ կցվել է armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցումներ բաժնի արտատպված (screenshot) տարբերակը, որպիսի պայմաններում «Անդրանիկ Քեշիշյան» Ա/Ձ-ին ծանուցումն ուղարկված լինելու հանգամանքը նույնպես չի ապացուցվում:

Վերոնշյալով պայմանավորված, Բողոքներ քննող անձը փաստում է, Մասնակցի հայտում հրավերի պահանջների նկատմամբ որևէ խախտում չի եղել, իսկ Հանձնաժողովի կողմից այդ խախտումները արձանագրելով և դրանց շտկման մասին Մասնակցին ծանուցելով, գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով Կարգի 46-րդ և 47-րդ կետերով սահմանված պահանջը, ինչն և իր հերթին հանգեցրել է Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված պահանջների խախտմանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Մասնակցի կողմից չի խախտվել գնման գործընթացի

շրջանակում ստանձնած որևէ պարտավորություն, որն էլ կարող էր հանգեցնել գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ուստի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 30-րդ հոդվածի 6-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.11.2019թ.-ի թիվ 26/26-1/19069-2019 գրությամբ «Անդրանիկ Քեշիշյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2019/215 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**